ՑԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՄՅՈՒՐ ԴԵ ՖԵԴԵՐԵ

(ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ)

ԵԵՐԵՎԱՆ

Հրատարակչություն «Խորհրդային Հայաստան»-ի

ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՄՅՈՒՐ ԴԵ ՖԵԴԵՐԵ

(ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ)

ԵԵՐԵՎԱՆ

Հրատարակություն «Խորհրդային Հայաստան»-ի

Գրաս. № 154. Տիրաժ 1000. Պատվ. 4856.
Տպագրական տրեստի 2-րդ տպարան. Երևան։

ՄՅՈՒՐ ԴԵ ՖԵԴԵՐԵ

(ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՊԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ)

Այս պոեմս նվիրում եմ հիշատակին

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՖԵՈԴՈՐՈՎԻՉ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

(ՄԱՐՏՈՒՆՈՒ)

քնկերոջ, կոմունիստի, մարդու

ԵՄ. ՋԱՐԵՆՑ

1925. 7. Հոկտեմբերի
Բերլին-Շարլոտենբուրգ

I. ՊԱՏԸ

ՊԱՏԸ

Եատե՛ղ և,
«Մյուր դն Ֆեղերե՝»
Եսպե՛ս և կոչվում Եատեղ նա,
Բարձրացել և դեմս հրեն,
Փլատակ և,
Պատ և դեղնած,

Մնացորդն և ատաջվա պատի,
Մի փոքրիկ կտորը,
Վոնց վոր ևր՝
Մնացել և են որից եղպես,
Վրեն՝
Հատիկ-հատիկ՝
գնդակների հետքեր,

Մեկ ել,
Հենց եղ հին բարերի վրա,
Վրեժից կիզված իր թակով՝
Փորփրել է դեմքեր
գարհուրած
մի բանդակագործ,

Քանդակել և ապա նա մի կին,
Վոր մեջքը բարերին հպած՝

անսահման ցասումը դեմքին,
սուինների բաց՝
յերկարել և ձեռքերն, անավոր,
յեվ տենդոտ դեմքը թշնամուն՝
մոնչում է՝

La Commune est morte —
vive la Commune!

Նա ինքն է.
Վոգիեն Կոմունի։
Ծառացել է.
կարո՞ղ է նյ ներել...
Ու շուրջը —
ողամարդ ու կին
նրա՛նք են.

Փարիզի
Կոմունարները։

Բարձրանում է սրտիցս ցասման անսայր ալիք։
Ուզում եմ թվել յես նրանց։
Բայց անթի՛վ են.
վո՞ւր թվեմ։

Եդ նրա՛նց հետ
յերնելով Վերսալից՝
սվիններով հանել
Գալիֆեն։
Եդ նրանց վրայո՛վ և վոր՝
պատվանդան շինելով եդ դիյե՛ր՝
բարձրացել և մի որ
Տյերր։

Նստեդ են խմբերով բերել
ու հպել պատին։

Սուլել են գնդակները.
դիպել են—
աչքերին,
կրծքերին,
կամ բունին մեկի, ճակատին։

Ծակել են մարմինները։
Մեջերից անցել
ու փորել են պատը։
Սուլել են անընդհա՛տ, անընդհա՛տ։
Կուտակվել են մինչև
հենց ես պատի՛ առջևը
դիակների պատեր։

Բարձրացրել են ձեռքերը վեր,
ծալել են ձեռքերը կրծքներին։
Սեղմել են մարմիններն իրենց —
տեսնո՞ւմ ես՝ ես բարի՛ն։
Զայրույթից պայթող աչքերով
թթել են թշնամու ուսին։
Վոնց վոր կարմիր դրոշ՝
բարձրացրել և մայրն յերեխին։

Ու վոչ սարսավ, վոչ ահ։
Վոնց վոր սամում
վոռնացե՞լ են դեմքին թշնամու՝
«— Vive la Commune!»

. . . . . .
. . . . . .

Հիմի չկան նրանք։
Հիմի չկան։
Բայց տեսնո՛ւմ եմ յես ահա վոնց վոր
նպարտությամբ զոցվող
աչքե՛րն են կոմունար աղջկա։

Տեսնում եմ բոցն աչքերի,
վոր վերջին վարկյանին թռած՝
մնացել և հրեն
փոքրիրած
են քարերի վրա։
Ու նայում ես։
Ինձ և նայում։
Պատրաստ ես — ասում ես։—
Հասկանո՞ւմ ես՝ վարկյանից մահու
մենք եսպես—ընկած—սպասո՛ւմ ենք։—
Սպասում ենք՝ հպած ես պատին.
ականջներս ձայներով դեռ լեցուն են...
Մնում ենք, վոր գաք, ազատեք,
վոր բերեք — Կարմիր Հատուցումը...»

. . . . . .

. . . . . .

Փարիզ։
Մյուր Ֆեդերեն։ —

Ցեռ,
պոետս,
լենինյան բոլշևիկ։
պատին կրթնած հրեն՝
լսում եմ նրանց ձայնը,
շշուկը։

Հասկանում եմ յես ձեզ, ընկերնե՛ր։
Մոտի՛կ եր դուք ինձ։
Հարազա՛տ եր։
Մեկը թե զար հիմա յեվ ինձ ետեղ տեսներ՝
դժվա՛ր թե դեմքս նա ձեր դեմքերից զատեր։
Ինա՛րկե, թշնամին թե զար՝
պիտի կարծեր, թե դեմքս

ձեր դեմքերի՛ց ե՝
գնդակով ես պատին բանդակած։ –

Ձեր մա՛ց եմ յես ել. ընկերնե՛ր,
իմ մեջ ե մարմնացել ձեր աճյունը։
Նայում եմ յես փորած ձեր դեմքերին հրեն –
յեվ մեկ-մեկ ճանաչում եմ...

Հարկավոր եր յերկա՞ր դեզերով
ու հազար ճամբաներ մաշել,
վոր զայի, կանգնեյի ձեր դեմ,
վոր հասնեյի ճստեղ-
Գեր-Լաշեզ։

Բայց չտեսած դեռ ձեզ
յես ձեզ գիտեյի։
Յեղել եր դուր ընկեր
թե յերգիս, թե ինձ։
Վոնց վոր տեսել եյի
ձեզ յերազումս։
Ո, վաղո՞ւց զգացել եմ յես ե՛լ
ձեր վերջին հուզումը...

Ինչրա՞ն անգամ յես ել,
ձեր վերջին ջերմը ճակատիս՝
սարսափած կեցել եմ՝
հպած մի պատի։
Յեվ ավիններ ինչրա՞ն
ծակել են կուրծքս, յերբ
մի յերջանիկ դիպված
փրկություն ե բերել...
Ինչրա՞ն եմ ազատվել հանկարծ,
Ինձ կորած եմ կարծել յերբ յես։ –
Ուզո՞ւմ եք ձեզ պատմեմ մի արյունոտ արկած –

մեր պայքարում փոքրիկ նա մի դեպք է թեպետ...

. . . . . .

Ն քաղաքում էր։
Տանջվում էր թվին։
Թշնամին դիմանում էր։
Կռվելով՝ մենք բաղարը տվինք։
Թշնամին տիրել էր
բաղաքի դիրքերին։
Մեր բոլոր ընկերները
ընկան գերի։
Ցեռ յեվ ընկերս
յերկու արմեյցի
նետեցինք գենքերս՝
գնացինք։
Բոլոր փողոցները,
անկյունից-անկյուն
թշնամին բռնել էր,
կապել էր փողոցները, վոնց վոր հանգույց։

Ցեռ անցա ցանկապատը
մտա այգին։
Նկատեց ընկերոջս մի ապիտակ կազակ։
Ցեվ ասա մտրակեց իր ձին
յեվ Սերգեյին հասավ։ --

Վորտեղի՞ց ես, հարցրեց կազակը։
Դու ենտեղից, դիրքից...
Բաս ո՞ւր է հրացանդ։
Նետեցի...
Կարմիր արմեյցի՞ յես։
- Այո՛։
— Այո՞ո՞...

Ցեվ մտրակեց իր ձին
յեվ բշեց՝ Սերգեյի վրայով։

Ցեգի՜շ, Ցեգի՜շ գոռաց
Սերգեյը ներքեվից։
Սուրբ բունքին առավ,
անցավ թեվից։
Ցերկրորդ հարվածն հետո
գանգր կիսեց։
Ցես հեռացա փութով,
վոր չկիսվեմ յես ել...

. . . . . .

. . . . . .

Ցեվ հիմա հատեղ եմ,
կոմունարնե՛ր, ձեզ հետ։
Դավաճա՞ն եմ յեղել
կասեք։
Բայց գիտե՞ք՝ վարկյան եր մնացել,
վոր կիսվելի յես ե՛ր։
Ցեվ գիտե՞ք՝ ինձ ե՛լ վոնց վոր են
վարկյանին կիսել, հարվածե՛լ են.
են վարկյանից գիտե՞ք մինչեվ որս
յես լսում եմ լսում եմ... նրա ձենը։

Ի՛նձ եր կանչում.
ինչո՞ւ...
Ցերեխա՛ յեր Սերգեյը. .
Ո, մանուկ եր նա վոնց վոր մի։
Տեսնում եմ սակայն, վոր նա ե՛լ
նայում և հրեն ձեր վորմից՝
Վո՞նց և թռել հատեղ՝
կազակի հարվածը ճակատին,
ու նայում և հապես,
ձեզ պես

Պեր-Լաշեզի պատից...

. . . . . .

Թող պառկի՛, պառկի՛ թող նա հստեղ,
ձեզ հետ,
հենց ես պատի ներքո։
Միգեմնույն չե՞ ընկած կազակի,
թե վերապրող ձեռքով։
Ընկերնե՛ր։
Թող պառկի Սերգեյը ձեր քով։

. . . . . .

Եղեք եր, ընկերնե՛ր, եղ դեպքը։
Եղեք եր, Պեր-Լաշե՛զ։
Իսկ հետո՞...
Ինչ վոր յեղավ հետո
յես վո՞նց ասեմ...

Այգիների միջով
յես մտա մի տուն։
Փոխեցի շորերս,
փողոց յելա։
Ու քայլեցի մթում, վոնց վոր կատու.
արյունը հոսում ել քաղաքում, վոնց վոր սելավ։

Ինձ բռնեցին շուտով։
Խուզարկեցին վրես։
Բան չգտան վրես՝ ձեռ չտվին։
Ինչ վոր յեղավ սակայն— մահից վատ չե՞ր միթե...
Ինձ քշեցին մի տեղ,
մի տեղ,
ուր կարող ել լինել մահը- կյանքի դեվիզ։

Մի հարյուր մարդու յեռանվից
ինձ ել խառնած նրանց՝ դաշտը քշին։
Ճամբին նայում եյի

շուրջս
ուշիմ։

Փողոցներում տեսա –
հազար ընկեր։
Վորը բունից զարկած, վորը վզից։
Վողջը ծանոթ մարդիկ,
ծանոթ դեմքեր։
Հիմի դիակ դարձած,
ցիրուցան
եշերոններ մսի։

Սակայն եղ ել վոչինչ։

Կայարանին մոտիկ
կար «Ciy»-ի մի մեծ, հսկայական սեկլամ։
Ցուցանակի նման ցցված եր նա ենտեղ
զույգ սյուների, վոնց վոր զույգ վոտների վրա։
Ա՛յ, «Ciy»-ի հենց եղ ցուցանակի վրից
կախված եյին մերոնը... հինգ ընկերներ մեկտեղ։
Ինչ-վոր կիներ, հարբած, շուրջը շրջում եյին,
լեզուները հանում ու ծիծաղում լկտի։

Յեվ կայարանն հետո...

Ենտեղ, դռան մոտին,
կային յերկու լապտեր՝ սովորական, գազի։
Զորս ընկերներ եղտեղ մեկտեղ կախված եյին
սեվ լեզուներն հանած յեվ վոտքերը գետնից
բարձրացրած հազիվ...

Կայարանի մոտից մեզ բշեցին դաշտը։
Յերկաթ բահեր տվին։
Յեվ փորեցինք ահա մեր ձեռքերով մի մեծ
յեղբայրական շիրիմ։

Ցերկու հազար ընկեր մենք դրեցինք եդտեղ,
լցրինք իրար վրա, վոնց վոր ծկներ մզված։
Վորը թե չեր մեռել, կամ վիրավոր եր թե՝
նրան նեռում եյին եղպես՝ մի աչքը բաց։

Հասկանո՞ւմ եր արդյոր, ընկերնե՛ր,
թե ի՞նչ ապրեց հոգիս եդ գիշերին։
Թե հարազա՞ս. մոտի՞կ, յեղբայրական ձեռներ
ինչքա՞ն, ինչքա՞ն անգամ ինձ դրեցին շիրիմ...
. . . . . .

Իսկ առավոտ, յերբ յես
դարձա բաղար,
դրված եր մեյդանում
մի կախաղան։
Շուրջը մարդիկ, կանայք
հագած կապած —
յեկել եյին վոնց վոր
գվարթ կաբակ։
Ու տերտերներ ճերմակ,
վորոնց շրթից
հոսում եր, վոնց վոր թերմացք,
ինչ վոր մի յերգ խրթին։

...Ցեվ բերեցին անա, շրջապատած,
մեր գինկոմին՝ տկլոր, վոնց վոր ժորութ։
Նա բայլում եր հատատա, գլուխը բարձր,
կարմիր դրոշ ուներ վոնց վոր բռնած
իր կապույտ, իր լուրթ աչքերում։—

Կախաղանի ներքևը դրված եր մի արկղ։
Սապոնի յեր՝ վրան գրած «Բոդյո»։
Նա բարձրացավ վրեն՝
բա՛րձր,
բա՛րձր.

ու, ինձ ենպես թվաց, թե շուտ կտա հիմա
յերկրագունդը վոտով։

Նա նայեց եղպես իրա շուրջը՝
հայացքը վոնց վոր գերանդի։

Ու գլխատեց վոնց վոր նա հայացքով իր եղ-
թշնամական վաշտեր ու բանակներ անթիվ։

Ուզեց ինձ ել հանկարծ
վոնց վոր հնձի։
Հասկանո՞ւմ եր՝
նա —
նայում եր
ինձ...
Յեվ ճանաչե՞ց արդյոք,
հասկացա՞վ,
հասկացա՞վ արդյոք, վոր հայացքը
կախարդանքեր՝ դեմս անհազարմուր կեցած։
Բայց չտեսա ել յես։
Ել չիմացա։
Յերբ նայեցի հետո՝ նրա դին
արդեն կախված եր ցած...
Ընկերներ!
Յես վո՞նց չխենթացա...

. . . . . .

Եսպես ե անա, Պեր-Լաշե՛զ։
Յես փրկեցի կաշին,
բայց անոդո՛ր յեղա,
յերբ Կարմիր բանակը կրկին
մտավ քաղաք։
Ո, յերեք որ չանցած յես ունեյի արդեն

կարմիր ծեռներ...

. . . . . .

. . . . . .

Հասկանում եր դուք այս, ընկերներ,
հասկանում եր արդյոք հիմա թե
ինչքա՞ն ենք ունեցել մենք էլ
Պեր-Լաշեզի պատեր։
Եվ պատերի տակին յերբ ընկավ
մեր վերջին ընկերը —
են որից
մեր կռիվը անվերջ, անընդհատ է։
Մեր պայքարի ճամբին
Պեր-Լաշեզի պատեր ինչքա՞ն ենք մենք փորել։
Բայց ունենք մենք մի պատ, ընկերնե՛ր,—
յեվ ուրի՞շ և, ուրի՞շ և եղ մի պատար...

Մոսկվում է նա։
Հյուսիսում։
Եստեղից հեռո՛ւ յեր.
Ձեզ ծանոթ է սակայն նրա ճամբան։
Ձեզ գիտե՛ պայքարող բանվորը
Լոնդոնում նա լինի, թե Բուրում
վոր կոչվում է նա —
«Կրեմլյան Պատ»։

Պատկած են ենտեղ ընկերներ,
վոր սլիտի պատկեին ծեզ հետ։
Նա մի կարմիր, մի նոր
Պեր-Լաշեզ է։
Բայց ուրի՞շ, ուրի՞շ Պեր-Լաշեզ։
Հաղթանակի մի պա՞տ։
Նրանո՛վ ենք վատքի մենք հասել,

աշխարհը յերկուսի կիսել.
Նրանո՛վ ենք եսոր
հպարտ։

Մե՛նք ենք փորել եվ պատը հաղթանակից հետո։
Մեր շարքերի համար
նա հաղթական կամա՛ր է։
Ենտեղից և անցնում մեր հիմնակա՛նը, հոնը։
Պայքարով ենք դրել
ամեն մի բարն ենտեղ։
Հաղթանակո՛վ հիմնել
մեր Կարմիր Պանթեոնը։

Ձեզ զուցե ցնո՞ւրը և թվում,
վոր աշխարհում հիմի
Կարմիր Պանթեո՛ն կա։
Ձեվ՝ պատկած են ենտեղ բով-բովի
մեր բոլոր ընկերները
Մոսկվում
Հոկտեմբերին ընկած։
Պատկած են նրանք, վոր ընկան
առաջին գրոհի՛ն մեր։
Ձերը առաջին անգամ
գնացաց
հաղթանակի հի՞մնը։
Ձեվ առաջին եղ մեր
մարտիկներից բացի
պատկած են ենտեղ ընկերներ,
վիթխարի, արի ընկերներ,
վոր պայքարի համար հաղթական
բառոտիներ բացին։

Սակայն բոլոր եղ մեր շիրիմների կողքին
կա առաջի՛նը, մեծը.
Եդ բոլորի կողքին – են մեծագո՛ւյնը կա։

Կանգնած և նա ենտեղ, իրր անհաղթ փատրի
մի վիթխարի վկա։

Պատկած և ենտեղ Իլյիչը...
Մեր կարմիր դեկավարը.
լսո՞ւմ եք...
Եդպիսի դեկավար չի՛ր.
եդպիսի դեկավար—յեղել չի՛,
վոչ յերեկ,
վոչ առաջ.
վոչ հետո՛մ!

Իլյիչը—
ուղե՛ղն եր մեր դասի.
մեր դասի հոգի՛ն եր։
Նրա ամեն մասում
հոսում եր մեր դասի արյունը։
Նրա մկանն ամե՛ն,
ամեն բջիջը մի—
դասակարգի համար յեռում եր, պայքարում՝ եր։
Իլյիչը—
դե՛ վոնց վոր յերկրագունդը։
Այսինքն՝ աշխարքը,
վոր հավարել և կյանքը իր ջղերում։

Իլյիչը—
հավաքել եր մեջը—
հիսո՛ւն հազար սերունդ!
—Բանվորական, ինա՛րկե, —
բանվորական սերունդ!

Դասակարգը
դրել եր նրա մեջ իր բոլոր մեծությունը։

Նա շնորհ,
կամք
յեվ գիտութիւն եր։
Դիսցիպլի՛ն եր Իլյիչը
դասակարգի մի նոր,
վոր ձգտումներ ունի
ընդհանուր։
Վոր փոխելու յե կյանքը
հանուր։

Նրա միտքը—
ովկիան եր լեռ։
Մոնչող Ատլանտի՛կ եր.
ուրի՛շ եր։
Ասում են՝ թե պայթի հյուլեն
աշխարհնե՛ր կը բանդե նրա ույժը.
Հյուլեյի տարքը թե հալչի
մեն մի հատիկ հյուլեն
յերկրներ, լեռնե՛ր կը հալե.

Եղպես,
հոսում եր ուղեղն Իլյիչի
տարբայուծված հյուլե։

Յեվ գիտե՛ր, գիտե՛ր Իլյիչը
բազմութիւններ կոնը։
Գիտեր կամքեր հազար
իրար բերելը։
Կառներ կամքը ոսի,
կամ գերման, կամ չին բանվորի
Հազոյի կամքին կը կապեր։
Եսպե՛ս կոնց բոունցքը
բանվորական դասի
յեվ դրեց անունը

Ր. Ք. Ա.

Հարկավոր եր ամբողջ մի դասի
ինչքա՜ն քրտինք ու ջանք,
վոր ծնվեր հանճար մի նապիսի,
ինչպիսին եր ինքը...

Դիտե՜ր, գիտե՜ր Իլյիչը բազմություններ կոել...

. . . . . .

Բայց կամա՜ց, կամա՜ց, ընկերներ!
Մոռանում ե վոստիկանը։
Գալիս ե։
Ստիպված եմ կտրել ակամա
ես կարմիր նուշերս։—

Թողեք յերթամ հիմա։

Կգամ—գիշերը։

II.—ՆԵՐՔԵՎՈՒՄ ՔԱՂԱՔԸ

ՆԵՐՔԵՎՈՒՄ ՔԱՂԱՔԸ

Դիշեր։
Մշուշ։
Փարիզ։

Յեղնելով մշուշից,
հրևն,
բարձրանում և դեմս նորից
Պեր-Լաշեզը
Մյուր դև Ֆեդերեն։

Ու նորից հենվել եմ պատին,
կեցել եմ՝
վիթխարի քանիծը ճակատիս։

Ցեռեվից
պատից
բարերը փսփսում են, խոսում են։
Կամաց,
հատիկ -հատիկ,
կաթկթում են բառերը։

Լռել եմ։
Լսում եմ։

Ներքևում հեվում և քաղաքը։
Բարձրացած առկայծող խավարից՝

Ներքևում հեվում և վիթխարի
Փարիզը։

Կարմիր լամպերը յերիգել՝
պատկներ են կապել ճակատին։
Առկայծում և Շան գելիգեն,
պսպղում և Կոնկորդը վիթխարի։
Մեջտեղում ցցվել և Եյֆելը,
ու շուրջը,
շրջագծում լուսե—
վիտրիններն անհա, կաֆեները
դատնում են, վոնց վոր կարուսել։

Ներքևում,
յետև-յետևից,
թռչում են թևթև ավտոները։
Փողոցներն իրար շաղախել՝
ավտոները դոռում են։
Խոզովակներ վոնց վոր ջերմաչափի՝
փողոցները յեռում են
ավտոների տապից։

Իսկ ներքևից, գետինը բելելով,
փորելով գետինը
սողում են մետրոները, գալարվում են։
Աղիքնե՛րն են դրանք բազարի.
ամբոխները սատել են ըկին.
:պղտորել և արյունը։
Կատաղել և մետրոն տենդից,
չմարսելուց դեղնել
ու թրում և եռեռդ ու ենռեռդ
մարդկային հսկա հեղեղներ։
Թափում և խորխը դուրս
Բելվիլում, մոտերքն Եյֆելի, —
ամբոխներ և հորդում,
վոր կլանե ելի։

Ցեվ լամպերի լույսում
բոլորովին հանված՝
անվախ՝
լողանում են դրսում
սիմորուս ու տրամվա։
Պոռնիկներ են վոնց վոր հոլանի,
գալարվում են կրրից մերձիմահ.
փախել են վոնց վոր հենց հիմա
Շարանելի անից։
Գալարվում են մի բարոն տենդից,
խմել են արաղնա ու ջին...
մութ անկյուն են փնտրում, վոր ենտեղ
հանձնվեն
առաջինին։ —

Ներրևում առկայծող լույսերից
հորիզոնը կարմիր է։
Ցերկինքը վոնց վոր ալ մշուշ է։
Չեն յերևում թեկուզ.
բայց տեսնում եմ յես մի աստ մի՝
Ոպերան,
Ֆրանսական Կոմեդին,
Մուլեն Ռուժը։

Եղ նրա՞նք են վառել մշուշում
ելեկտրական լույսի ովկիանները հրեղեն։
Վառել են,
հսկում են ուշիմ,
վոր բուրժույը ճամփան չշեղի։
Լույսեր ոսանց ու շեկ,
լույսեր դեղին,
գալարվում են շամբշտա մշուշում,
վոնց վոր ոձեր հրեղեն։
Ոդում թարթում են, կախարդում,
վոր անցորդն անսխալ կարդա,

Թե ինչ՞ով, ինչ՞ով և հարուստ
գիշերվա
Մոնմարտրը։

Բայց ինչու՞ կարդալ «Մուլեն-Ռուժ»
յեվ ինչու՞ մտնել կազինո,
յերբ բոլո՛ր փողոցներդ,
ո՛վ վիթխարի Փարիզ,
վիտրիններ են սիրու։

Փողոցներում եղ լույս,
մինչեվ առավոտ
վիստում են պոռնիկները
գինով։
Թարմներով ենտեղ
թափառում են, կանչում -
ե՛զ ձիերի նման, փողոցների տենդում
վրնջում։

Ու պարում վիթխարի եղ,
իր ճարպոտ մուրթը տնկած ոդում՝
հոտոտում և բուրմունք։
Փնտրում և միս կնոջ։
Վոչի՛նչ, վոր ինքը վորձ և փտած։
Ո, բուրմունք բարի՛ յեւ.
թե չտվեց ձեզ ստ
ետ սիֆիլիս կոտ՞։

Մյուզիկ-հոլլ։
Բալ-կաբարե։
Վարյետե։
Սինեմա։
Թատրոն։

Կարելի չե հղփանալ,
պարել,
Իսկ հետո —
վորկորում իր տոթ —
ձեզ կրտանի մետրոն։

Մետրոն բարի չե։
Յերևտանինգ սանտիմ —
յեվ կր նետե մետրոն ձեր քամած մարմինները
եղ լուսավոր, շողուն շրջազգեցիկ անդին։

Եղ լուսավոր, շողուն շրջազգեցիկ անդին
բանվորական թաղերը
խավարում
վորոնում են սու ու սանտիմ։

Ելեկտրական լույսի փոխարեն
գազի լամպերն ենտեղ
նպոռոտ աչքերը խրել՝
անտղում են խավարը։
— Եղ խավարի՛ն տարեր
ձեր քամած մարմինները.
Փարիզում եղ խավա՛ր միայն
անվերապահ կերպով ձեզ հատա՛ր ե։

Դե Փարիզը կենտրո՞ն ե,
սատա՞նցին ե աշխարքի։
Ի՞նչ կլիներ աշխարքը,
թե չլանար Փարիզը
բազարների շարքից!!
Թե վոր միանգամ չտան
ել ինչո՞ւ չեն շինում գավառները.
բանվորական թաղերն ել ինչո՞ւ չեն! —
Ո, չգիտե՞ր միթե՝

Փարիզում մեռնելը
հաճույք է, յերկնային մի չար յե!!

Ու մեռնում են։
Մեռնում են խմբերով։
Տեղերը բռնում են
մերոնը։
Դեպի շուկան սիրո
տոններով դրկում են հղկած միա։
Թե չլինեն մերոնը--
բուրժույը ո՞ւմ բամի...
. . . . . .

Գիշեր է։
Մյուր Ֆեդերե՛։
Նստել եմ՝ հենված մի քարի։
Ներքևում հևում և վիթխարի Փարիզը։
Ո, վիթխարի՜ Փարիզ՝!

Ենսեղ Փարիզը
յեփում և յեռանդ ու արկած։
Տագնապից դղրդում է յերկիրը։
Թագավոր և ենսեղ -- Առարկան,
դիկտատոր է
Ի՛նը։

Ամբոխների մեջքին
նստել, վոնց վոր վիշապ՝
բշում է, ուր վոր կուզե։
Մարդը անհա՛յտ է լոկ,
մի զանելի նշան.
X.
Y.
Z.

Գրում ու ջնջում է Մերենան,
փոխում է հարցանիշը։
Հանդում է.
պահանջում է յուանդ ու արկած,
վոր բազմանա, աճի առարկան,
մարդու ձեռքով սարքած
եղ Գիտիշը։

Յեվ առարկան աճում, բազմանում է։
Յեվ աճումը նրա անվազ է։
Յեվ աճա-անթիվ է իրը,
վոնց վոր բանակը ասաղների
յեվ ծովերի ավազը։

Յեվ եղպես
յերբ աճում են իրերը
բարձրացնում են բունա։
Լցնում են խանութները,
շուկաներն հորդում։
Ենթա՞ն են աճում մի տարում,
վոր բոլո՞ր շուկաները նվաճում են։
Բայց ինչի՞ն, ինչի՞ն է իրի
եղ անտեղի աճումը։ . . .

Բարձրանում է խուճապ։
Ամբարներից իրենց, դարակներից
իրերն հորդում են դուրս։
Կոծոտում են շղթան գների,
թափվում են փողոցները՝
խոխվ,
հորդու-հորդու։

Վազում են կոշիկները,
ուզում են հագվել վոտքերի։

Եվ չին ուզում լինեն
վիտրիններին գերի։
Մուրճերը ծեծել են ուզում,
մերենաներն հնծել
յեվ չմնալ իզուր,
վոր ժանգը ճանկերով իրենց հոգին խանձե։

Յեվ ես բոլորը յե՞ր։
Ցերը բորիկ են բյուրերը։
Տկլոր են յերը ու մերկ
բազմություններն իրենք,
վոր կոկ են, կոփել եղ իրերը։
Ցերը բյուրերի փորերը
կշտացած հո չի՞.
յերը ուտում են նրանց
կեղտ ու վոջիլ։

Անելի՛ յե սակայն, Պեր-Էաշե՛զ,
յերը բունտ և իրերի։
Ցերը մարդը ճորտ է լոկ՝
իրին գերի։
Ցերը բողոքում և իրը՝
սպասվելու տենդով
ցնցելով յերկիրը
Հնդկաստանից Լոնդոն։
Ցերը ծախվելու խանդոտ յեռանդով
ապստամբեց իրը, վոր աշխարքում բազմի
վերջացավ։ --
Բյուրե՞ն ել գան թող
պատերազմի։..

. . . . . .

Եսպես մի որ
յերեկ
Չիկագոյից մինչեվ Ստամբոլ—

երկրներում բոլոր
իրն ապստամբեց։
Բարձրացավ Լոնդոնում, Ռուրում,
Փարիզից բշեց մինչև Չին
յեվ հանեց թնդանոթ ու ռումբ
յեվ դարձրեց մարդուն
վոնց վոր հարթ՝
չնչին։

Հասկանո՞ւմ եր՝ վորպեսզի չարչին
նոր ճամփաներ հարթի ապստամբած իրին,
վորպեսզի իրր չփախչի
իր ճարպոտած ձեռից
մարդկային կյանքր վոչ հանձնեց հրի։

Յեվ շներից ասա, բաղարներից,
Հիմալայից մինչև Նիագար,
բանվորական խմբեր
ու թաբուններ գերի
լցվեցին դիրքերր։
Դաղութներից բշած
գավառներից՝
բերեցին բոնի՝
թափեցին դիրքերը։

Տերը,
նստած մեջտեղում,
իր լիության թասի
վոսկիներր դեղին
թափում եր հորդահոս
բանվորական դասի
դահիճների ոեխին։
Դեմքին դիմակ առած,
հագած խոսքեր ստի՝
բանվորական գնդերը

Նրանք
կապեցին թնդանոթի։

Կարելի չեր նստել դեռ անթիվ
ածականներ շարել։
Ընկերնե՛ր,
չգիտե՞ք միթե,
թե դրանք ովքե՛ր են։

Վարպետներ են դրանք հանճարեղ,
վոր գիտեն նատուկներ բորել
յեվ կոպեկներ քերել։

Նրանք խոսքեր ունեն
առատ,
վոնց վոր ոեգին։
Խլեցեր նրանց եղեիմ,
վոնց վոր չղջիկ,
աշխատում և գիշերը։
Նրանք կարող եյին
անկյունից խփել ժոռեսին,
վոր մնգստան հետո բանվորական դասին
խոստումներն իրենց
զազիր
յեվ քոռ զոռոշ չարժող իրենց «սերը»։

Եղպես պոռնիկը
կարմիր և բատմ յերեսին,
վոր հմայել մարդու։
Եղպես հնածախար
յերբեմն
գործածում և արհամարհ։
Ասում են նրանք «Հայրենիք»,
«Մշակույթ» են ասում.

յո՞ւմ ենք.
եղպես նյամ-նյամը վայրենի
ողկոր և շարում իր բեռին,
վոր ծածկե իր բոստա մերկությունը!
Եղպես «լուսավոր» ջինգոիստը,
վորպեսզի վգերին նստի
յեվ խմի բրանդիներ հյուր
դեպի վայրերը վայրենի
ուանում է գուլնգուլն բուստեր
ու կոպեկնոց հուլուներ։

Են ձայներ,
վոր պիտի կատաղի մոնչար
պիտի թքեր աշխարքը մորթողների ուեխին՝
գնդակով լուց՝ չինչած։
Գնդակով հպած մի պատի՝
ընկավ դեկավարը
դավադիր
դահիճների ձեռից։

Բայց են ձայներ -
ձայն չե՞ր հո անհատի.
անհատի ցանկություն հո չե՞ր։
Դեռ մի տարի չանցած՝ նա դղրդա՞ր պիտի,
բանվորական շարքերը
գրոհների կոչեր։

Են ձայներ,
չանցած մի տարի
պիտի հնչեր ենտեղ Կինտալից,
Ցիմմերվալդում հետո նա դատնալով վորոշ՝
պիտի պարգեր կարմիր գրոհների դրոշ։

Կարելի՞ յեր արդյոք են ձայներ
խեղդել հեղեղ դարձած արյան մուժում։

Են ծայնը
շուտո՛վ,
շուտո՛վ
շուտո՛վ
պիտի բողո՛ր դառնար
յեվ անողոր՝
բանակների բոլոն սիրտը խուժեր։
Տարածվելով եղպես, ծավալվելով անշեղ,
լեռնանալով կարմիր են ծովերում արյան –
պիտի հնչեր հետո, պիտի կանչեր՝
Ցելի՞ր, պրոլետարիատ...»

. . . . . .

Խանգարեցին թեկուզ նրան մարդիկ կուզիկ,
համոզել ծգտեցին թեկուզ,
վոր դասակարգը մեր
իր իրավունքը
մուրացկանի նման՝ տիրողների՛ց ուզի.
կիսեցին թեկուզ յերկուսի
բանվորական բանակը
սակայն կրկին՝
յերբ ժամանակն յեկավ՝ իջա՛վ բոլոնցքը մեր
տիրողների բկին։

Տիրողներին ծախած
իրենց հոգին՝
նրանք ծգտում եյին
մեզ կապել թոկի։
Ցերբ բազմանում եր. աճում եր
որեցոր մեր թիվը՝
նրանք ծգտում եյին
ընտանի շնիկ դարձնել
մեր ծավալուն կոիվը։
Սարրել եյին իրենք
թեկուզ «Միությո՛ւն» մի,

սակայն
բավական էր մի ռումբ, վոր ցրեր
եղ «Միությունը»!

Նրանք բացել եյին եղ «Միությունը»,
վոր ով էլ դիմի
ծախեն նրան փթով
թնդանոթի միա։
Յեվ ծախեցին ծրի։
Սակայն մինչև եղ՝
յերկաթե ձայնը Լենինի
բանակներում մնչեց։
Կանչեց ձայնը նրա
բանակից բանակ,
տիրոջների վրով
յերկարել ձեռքերը
յեվ յեղբայրանալ։
Կանչեց ցնցել դիրքերը
տիրոջների գահի
յեվ պայթարի յելնել
դասակարգային!
Յեվ մերոնը յելա՞ն։
Դարձրին սվինները
տիրոջների վրա՝։
Սակայն նրանք
փորձեցին կրկի՞ն մեր կոիվը
դարձնել ազգային ջազբանդ...

. . . . . .

Ներքևում Փարիզը
հևում է շնչասպառ։

Ցնցեցին աշխարհը թեկուզ
հոկտեմբերյան թինդերը
սակայն նա դեռ
տենդագին սարսափը հոգում

համառում է՝ շնթռկած ենտեղ։
Սվիններով թոկով յերկաթել
բանվորական գնդերը՝
կուտակել տանկեր ու հանքեր
յեվ կարծում է՝
տեր է։

Իրը
կրկին ենտեղ
պահանջում է զրգիռ ու արկած.
բրտինք և ուզում՝ լցնի փորը։
Մերձիմահ,
կիսամեռ ընկած
եղ գերի-դիկտատորը!

Կարծում են՝ մեղմեցին նրա բունտը!..
Նրա կողը
խրելով թնդանոթ ու դանակ՝
բաշեցին արյունը
ու դրեցին բինտեր,
վոր հանգստանա։

Սակայն տենդից հետո
բաղցած, վոնց վոր գազան՝
մոլտում է՝ շնթռկած ենտեղ նա։
Խժռում է խոժոռ մոտիվով
բագմուկյուններ բագում
ու արյուն և հագում՝
տենդից դեղնած։

Ցերախով յերկաթե՝ իր
լափել և ուզում անհագուրդ —
հանք,
քրտինք,
վոսկի ու վարսակ։—

Բայց տագնապով խժռած
յունարանչյուր կաթիլը
հոինդով հորդում և դուրս՝
դեռ չմարսած։

Հոնդում և,
թնդում և ջղածիգ,
տագնապից դղրդում և յերկիրը։
Զգիտե՞ն խեղճերը,
վոր լծկան անասուն հո չի՞
աշխարհի դիկտատորը
տերը!

Իհարկե, կարող են նրանք
հողը
մի տագնապով վերջին
դարձնել կրկի՞ն արյան ծով։ –
Բայց չի՞ հաջողվի նրանց հո
դարձնել իրը շնիկ,
ու մուրթը ցանցել
հնի
են ժանգոտած ցանցով։

Ես անգամ ել յեղավ
թե բունտ իրերի՝
մենք գիտենք՝
լինելու յե
բիմիական կոիվ։

Լսո՞ւմ եք, ընկերներ!
Յերեկ
պատերազմ եր գազի։
Բայց են
ինչ լինելու յե վաղը
գազը նրա կողքին
հազ և հազիվ։

Ճառագայթները ունեն
նրանք հիմա,
որ տարածում են
յերաշտ ու մահ։
Հիմի ռումբեր ունեն,
որ պայթելուց բացի
կարող են տարածել
սիֆիլիսի բացիլ։
Կարող են տարածել տենդ։
Տիֆ։
Ժանտախտ։
Մի ժամում կարող են
յերկրագունդը,
հո՛ղը վողողել
դիակներով անթաղ։

Իհա՛րկե, կարո՛ղ են։
Յեվ կրփռրձեն անել։
Յեվ կանեյին հիմի
թե թողնեյինք կրկին
դարձնել մեր դիյերը
թնդանոթի միս։

Մեր միտը,
մեր դիյե՛րն անգամ
նրաբ վատո՛ւց հիմի կլինեյին մարտած
թե չշրջեր ներքևը
մեր կարմիր Ուրվականը,
որ կոչում են նրանք
«Կոմունիզմի Սարսափ»!

Թե որ լիներ մեր վիզը
նրանց առջև կքած...
թե չիմանար Փարիզը,
որ եզուց կգանք!...

III. ՄԵՆՔ ԴԵՌ ԿԳԱՆՔ

ՄԵՆՔ ԴԵՌ ԿԳԱՆՔ

Ահը
զրկել և նրանից հիմի դեռ
Աշխարհին ափրոդր
ինչի չեկ ուզում և դիմի
կարո՞ղ և դարձնել ել մինթե
բանվորական գնդերը
թնդանոթի միս։

Տեսնում եմ՝
ներքեվում հիմի,
դե՛մս
դե՛մս,
ենտեղ
փոդոցների յեռում,
շառաչում
լսո՞ւմ եք՝
բառաչում և սարսափը . . .

Հեռուն,
բանվորական թաղերը խավարում
լսո՞ւմ եք.
փսփսում են.
խոսում են։
Վոնց վոր վրեժ մի ալ՝
նոսում և ենտեղից սարսափը
դեպի ետուալ։

Սարսափը
սանում և հատեղից, ձեր քովից,
փչում է Մոսկովից, վոնց վոր հողմ։
Վոնց վոր միրաժ մահու՝
հոնդում և սարսափը ու սանում
տիրոջների չորս կողմը ...

Հողմը,
ձեր հողմը,
Հոկտեմբերի հողմը
դարձել և հիմի ուրազան։
Նիազարից մինչև Արազած
հոնդում և հիմի յերկրազունդը։
Պատռելով լուսեթյան ցելերը՝
հողմե՞ր են հասցրել արդեն
մի առավոտ
հատեղ
ձեր ցանած ծիլերը։

Յեվրոպայում արդեն Կոմունիզմի Ուրուն
մարմին և ստացել ու միս։
Շրջում և Լոնդոնում, Ռուրում,
Բալկաններում հիմի։
Ցելնում հրեն Բելվիլից,
Կարմիր քանակ դարձած՝
տիրոջների հոգում սարածում և հիմի
անպատմելի սարսափ...

. . . . . .

Յերկիրը,
ափե-ափ,
լցված և մեր տապով։
Մի վիթխարի թափով՝
լում եմ
շուրջս ահա

հոնդում են լուրերը։
Սինգապուրից Փարիզ!
Վաշինգտոնից Լոնդոն!
Տենդով,
թինդով,
շուինդով
հոնդում են լուրերը։
Թիկունքս հենած ես քարին՝
լոկ եմ։
Լարել եմ ականջս։
Լսում եմ աշխարհի
ռադիո-կանչը։

Ցնցելով դեմից, ետևից —
տարածվում են լուրերը։
Լուրերը,
վոնց վոր հոգմ,
տարածվում են աշխարհի չորս կողմը։
Մշուշում
թպրտում և ողբ հոգվանման տապից.
դժժում և.
Ժու-ժժո՛ւ՛ն՛ն, ժու-ժժժո՛ւ՛ն՛ն՛ն,ժու-ժժո՛ւ՛ն՛ն՛ն...
— Շտապե՛ր, շտապե՛ր, շտապե՛ր...
Հնդկաստանից Տիբեթ
ու յետ՝
դեպի Փարիզ, Լոնդոն,
դեպի Բերլին...
Թնդում և ողբ լուրերի
տենդից։

Ու յես,
կնցած նստեղ՝
լարել եմ, արել ականջս։
Շուրջս
բռռում և

ռադիո-կանչը։
Ականջս նրա թնդյունին
լսում եմ։

Խոսում են Լոնդոնից։

«Լսե՞ք, լսե՞ք, լսե՞ք։
Խոսում է
Ֆորբեյն Ոֆիսի
Ռադիո Բյուրոն։
Հ.
Հ.
Հերո։
Մոսենումն մարդկության Ֆինալը։
Մոսկովից արշավում է
Յերրորդ Ինտերնացիոնալը։
Ամենաթարմ լուրեր։
Մոսկովի դիմակը բացված է հենց հիմա։
Կոմինտերնի բյուրո։
Զինովյևի նամակ։
Մոսկովից հրահրում են քանդել Ֆորբեյն-Ոֆիսը։
Լսե՞ք, լսե՞ք, լսե՞ք։...»

Հոնգում է մյուսը.
խառնվում է Լոնդոնի ձենին,
վոնց վոր նարաթ լինի։

Լսում եմ։
Խոսում են Բերլինից։

«Ա-յի՜ի՜ի՜...
Գտա՞ր, գտա՞ր, գտա՞ր...
Զարհուրելի սարսափ։
Կարմիր վտանգ։

Յերրորդ Ինտերնացիոնալը մերկացած!
Վո՛չ մի կասկած չկա!
Գերմանական Չեկա!
Գե՛ր-մա՛-նա՛-կա՛ն-չե՛-կա՛-ա՛ . . .»:

Ականջս
գերմանական ես կանչը
ինչքա՞ն պիտի տանջեր
չգիտեմ դեռ ելի
սակայն հանկարծ . . .
Ճանկռթում են անա ականջս
խոսում են Ռևվելից.

« Ռոռռոյի՜
ռռռռռռոյի՜ի՜ . . .
ռռռռոյի՜ի՜ . . .» —

Ուրիշ վոչինչ։
Խոսում են։
Բռռում և ողբ։
Յերեվում և՝ խեղդում են. . .
ռ՞ում . . .
ս՞վ. . .
ինչի՞ . . .

Կրկին լսում եմ։

Մի անհելի ալիք դիպչում է ականջիս։

Կծկում եմ ջղերս ու լարում։
Խոսում է Սոֆի՛ան։

« Անհելի պայթյուն տանեարում!
Հազարավոր դիակ!

Թագավորը դիպվածով ազատված!
Սարբել և Կոմինտերնի բոլշևիկյան հատվածը!
Միակ միջոցը սրա դեմ ճակատն է ընդհանուր!
Հինդենբուրգ . . .
Ցուգ. . .
Զեմբերլեն. . .
Վաշինգտոնից Դանուի!. . »

Բեռանում է ականջս
թատանթը թնդում։
Հոնգում է արդեն ռադիո-կանչը։
Ինձ ենպես է արդեն թվում թե
պայթում եմ՝ թնդանոթում նստած։

Ականջիս թնդում են.
« Հնդկաստանում բունտեր!
Մարոկկոն ապստամբ!
Ընդհանուր ցույց!
Գործադուլ!
Տեսոր!. . . » —

Հանկարծ լսում է վողջը,
վոնց վոր սրբեն ծեռով։

Հետո
լցվում է ողը
մի նոր յեռով։

Թնդում է կրկին ականջիս
մի անսելի հոխնդ։
Լցնում է աշխարհի լայները։
Հետո
խտանում են ծայնները.
բռնում են բոլ-բոլի . . .

Ականջս ճանաչում է կանչը.

Խոսում են Մոսկվից։

Թնդում է սիրտս,
լցվում է ցնծուն կրակով։

«Բոլորին, բոլորին, բոլորին!
Լենինյան նոր գորակոչ!
Մտել են եռկապև բառորդ միլիոն բանվոր!
5000000 պիոներ!
Բան
զյուղ-
զին-
կոմ-
թղթակից!
Բանվոր Զագինը
հնարել է հնձի մեքենա!
Կոմսոմոլը մտնում է կարմիր բանակ!...»

Բարձր,
բարձր,
անահ
հոնդում են լուրերը։
Թնդում են ականջիս դեռ ելի։

Խոսում է Յերրորդ Ինտերնացիոնալը։

«Կոմունիստական ցույց Ռևվելում!
Սիպտակ տեռորը!
Հեղափոխություն ճնշված է Անտանտի
դահիճների ձեռով!
Սպանվածներ անթիվ...
Անթիվ (...բացեր)
Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք...»

Կանչում և Յերրորդ Ինտերնացիոնալը։
Կոմունարնե՛ր,
լսո՛ւմ եք։
Կանչում ե՝
զան,
ազատեն,
յեվ բերեն Կարմիր Հատուցումը։
Կանչում և վերջին պայքարի,
վերջին գրոհի՛ մի։
Ընկերնե՛ր.
խախտել և արդեն
տիրողների հիմը։

Նրանք,
իհա՛րկե,
կարող են զարկել Մինկովին.
Ռեվելի կոիվը
կարող են արնախեղդ անել։
Սակայն չե՞ն կարող նրանք հո
Լենինյան բանակն սպանել։

Կարելի՞ չե սասսել ուրագանը,
կամ յեռնացող ալիքը։
Կոմսոմոլը։
Հոսող ժամանակը։
Եղ կենդանի գալիքը։

Կոմսոմոլը ...
Այսինքն նրա՞նք
վորոնց հանդեպ յես ինքս,
պոետս,
հնադարյան մամո՛նտ եմ թերեվս,
միջնադարյան տեսիլ։
Նրանք,
վոր բացել են աչքերը
Հոկտեմբեր են տեսել...

Հանում են,
ուռճանում են նրանք.
հասակ են քաշում, վոնց վոր անտառ։
Աշխարհը բովանդակ
դղրդում է նրանց արշավից։
Անթիվ,
անթիվ,
անթիվ,
աճում են,
բազմանում են նրանք
յելնում են Ռուրից,
Վարշավից...

. . . . . .

Վարկյանը
լարուն և հիմի, վոնց յերկունք։
Գալարվում և աշխարհը,
պիտի ծնի՞։
Դեմ առ դե՛մ
բանակներ յերկու։
Պայքար և գալիքի
յեվ համառող հնի։

Հինը
հեվում և հրեն ներքևում։
Տագնապից գալարվում և։
Նվում և։
Հավաքում և ուժերը
կուտակում
խեղդել և կամենում քնում
յեռնացող ընդհարումը։

Սարտափից դեղնել և
յերեսի կաշին։
Ռանգը թափել։
Քոել և աչքերը։

հառել հյուսիս։
Զատանցում և նոր Ռուբ,
Պեր-Լաշեզ։
Դիյե՛ր
դիյե՛ր,
դիյե՛ր,
եշերոններ մսի։
Կարծում և գալիքը,
անխուսափելին
գալու յե հյուսիսից։

Ինա՛րկե, ենտե՛ղ և
գլխավոր մեր բերդը։
Մեր գլխավոր ամրոցը -ինա՛րկե, հյուսիսո՛ւմ և։
Կը դիմանա՞ը սակայն մինչև որս մեր բերդը,
թե չլիներ կյանքում
Հնդկաչինից Զանգու
մեր կենդանի հոսումը։

Թե չլիներ մեր շունչը Փարիզում,
չլիներ Լոնդոնո՛ւմ կամ։
Յերկրագնդի յեթե
յուրաքանչյուր մասում
չրագմանար, չաճեր
Հոկտեմբերի հունտը։
Յուրաքանչյուր ընչում թե չշաչեր
մեր պայքարի շունդը հոնդոն
հիմի հո չե՞ր Փարիզը գալարվի ներքեվը
հոգևարքի անդում . . .

Դե ինա՛րկե -- ենտեղ և
գլխավոր մեր բերդը,
բայց եղ բերդից բացի
կա մի ուրի՛շ բերդ ել,
մի բերդ ել,

որ կոչում են նրանք
«Կոմունիզմի բացիլ»։

Յեվ եղ բերդից բացի ել
կան դեռ բազում բերդեր.
ով խելացի յե՝ բաց են
նրա դեմ եղ բերդերը ...

Մեզ հետ և
հասկանում ենք՝ ինքը
աշխարհի դիկտատորը,
տերը!

Մեզ հետ և
Ի՛նքը...
Մեր հիմնական ընկերը!
Յեվ զուցե

մեր մեծազուն, մեր մեծ,
գերազուն դաշնակիցը! ..

Մեզ հետ և առարկա՞ն։
Այո։
Աշխարհի մեծազուն ապստամբը։
Յեվ երբեմն զրգիռ ու արկած՝
կարծում են նրան կիամբե՞ն,
կամ կանանչն...
Բրտինք և պահանջում առարկան
յեվ ընդհանուր յարում,
յեվ վո՛չ թե մասնավոր կամ սեփական ձեռ!

Մեզ հետ վերջապես ինդուստրին
յեվ մեքենան—մեզ հետ ե։
Մեզ հետ և Եյֆելյան աշտարակը!
Մեզ հետ են և նրանք, վորոնք

ո վոչ թե ուտում են ուստից—
այլ ուղղը, մեքրը վորոնց
հանեարեզ ե, թոիչք ե—ու արագ ե!

Մեզ հետ են եյնշտեյնը, Շտայնմետը
յեվ ծերուկ Եդիսոնը.
լսում ենք...
Մեզ հետ ե թոչո՛ղ ժամանակը
յեվ պատմության հոսանքը!

Ապագայի շենքին ով դնում ե մի բար
կամ մի կաթի՛լ անգամ
նա մեր մե՛չ ե, մեզ հե՛տ ե
իր կամքից անկախ...

. . . . .

Յես ի՞նչ եմ.
չնչին մի հյուլե,
Բայց թիկունքիս ունեմ
կազմակերպված բյուրե՛ր,
Լեցուն ե սիրուս
նոր վիթխարի բախտով։
Անա՛ թե ինչու, ընկերներ,
ձեր քարերին նստած՝
մեր գալիքին վստահ՝
նայում եմ Փարիզին, վոնց վոր հաղթող...

Թեկուզ գիտեմ, վոր դե՛մն ե
մեր գլխավոր կռիվը,
թեկուզ գիտեմ, վոր դե՛մն ե
բայց գիտեմ, գիտեմ յես,
վոր հաղթանակը—մե՛րն ե։

Գիտեմ,
վոր ունենք մեր դեմը
քանի՞ Հոկտեմբե՛ր դեռ..

Ինչքան դիրքեր դեռ կան,
ինչքան բերդեր...
Գիտեմ, վոր լարել են մեր դեմ
իրենց բոլոր ուժերը,
պոպպատել են դիրքերը,
յերկաթե՛լ,--
բայց գիտեմ, գիտեմ յես,
վոր հաղթանակը մերն է,
հաղթական գալիքը յերբ էլ գա թե...

Նա դիկտատո՛ր է, տե՛ր է,
նրան էլ վախ չկա,
ում աչքերում վառվել է
ապագայի մի կայծ։
Ով տեսել է գալիքը
ավելի մոտից,
բան կոշկակարը տեսնում է
կոշիկն իր վոտի։
Ով վո՛չ թե տեսնում է ապագան,
այլ շոշափում է.
ով իր ամեն նյարդով
յեվ մագերով անգամ
զգում է անդադար գալիքների հպումը...

. . . . . .

. . . . . .

Եստե՛ղ է։
«Մյուր ֆիդերե՛»։
Եպե՛ս է կոչվում եստեղ նա։
Բարձրացել է դեմս հրեն։
Փլատակ է։
Պատ է դեղնած։—

Մեացորդն է առաջվա պատի։
Մի փոքրիկ կտորը։

Վանից վոր եր՝
մնացել է նն որից եղպես։
Վրեն՝
հատիկ-հատիկ՝
գնդակների հետքեր։

Քշեցին հորդու-հորդու
և բերեցին նատեր։
Ի՞նչ.
թաղեցին ձեզ թե՝
կարծում են՝ խեղդեցի՞ն ապագան։
Մեկերնե՛ր,
ընկար թե վոր դուք--
բայց
բա՞ում եք--
մենք կանք!
Դեռ կգանք!..

Լցված է կյանքը հիմա
մեր արշավի թինդով։
Մեր հոտինդով լեցուն է--
Շուտո՞վ.
շուտո՞վ կգանք։
Կրկրենք Կարմիր Հատուցումը!

Արդեն ատել ենք մենք
աշխարհի վեցերորդը։
Ցեվ կան,
յեվ կան թեկուզ,
դեռ կան բագում բերդեր
սկսվել և սակայն հաղթանակի յերթը։
Շուտով.
շուտով,
շուտով

Փարիզին և հերթը,
ընկերնե՛ր!...

Ներքևում հրեն
բանվորական թաղերը խավարում —
լռում են.
փսփսում են.
խոսում են...
Վոնց վոր վրեժ մի ալ՝
հոսում և ենտեղից սարսափը
դեպի Եռուալ...

Նրա շուրջը,
վրան
իջնում և անա ապջամուղը,
Թանձրանում և վուալը,
Կորչում և մշուշում շրջագիծը լուսե։ —

Արդեն Եռուալը
դողում և, վոնց վոր տերևվ, գալիքների ահից։

— Լսե՛ք, լսե՛ք, լսե՛ք. —
Եղ թաղերի վրա
շուտով կեղնե արեվը. վոնց վոր դահիճ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

La Commune est morte vive la Commune!» նշանակում է՝ Կոմունը մեռավ — կեցցե՛ Կոմունը։

Պեր-լաշեզ. — Գերեզմանատուն Փարիզում։

Շան գելիզե. — Փարիզի լավագույն փողոցներից մեկը։

Կոնկորդ. Համաձայնության հրապարակը Փարիզում։

Բելվիլ. Բանվորական թաղամաս Փարիզում։

Մեսրո. Ստորգետնյա երկաթուղի։

Մոնմարտր. Փարիզի հայտնի թաղերից մեկը, ուր կենտրոնացած են զվարճատեղիները։

Սենտալ. Փարիզի ամենահարուստ թաղերից մեկը։

Ոպերա. Փարիզի խոշորագույն ոպերային թատրոնը։

Քրանսական Կոմեդի. Փարիզի խոշորագույն դրամատիկական թատրոնը։

Մուլեն — Ռուժ. — Հռչակավոր կաֆե շանտան Փարիզում։